

**ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե**

**Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ 37/3**

**4 հուլիսի 2017թ.**

Քննարկվեց «ԿՈՐՍԱՆ-ԿՈՐՎԻԱՄ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ներկայացուցչի դիմում-բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 22.05.2017թ. թիվ 649/01 որոշման դեմ:

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի կողմից 22.05.2017թ. կայացվել է թիվ 649/01 որոշումը՝ «ԿՈՐՍԱՆ-ԿՈՐՎԻԱՄ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՑ (այսուհետ նաև՝ Մասնաճյուղ) 837.385.648 դրամ պարտավորության գումար գանձելու վերաբերյալ:

Մասնաճյուղի ներկայացուցչի կողմից Հանձնաժողով է ներկայացվել դիմում-բողոք, որով խնդրվել է անվավեր ճանաչել ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 22.05.2017թ. թիվ 649/01 որոշումը: Այնուհետև, Մասնաճյուղի ներկայացուցչի կողմից 22.06.2017թ. ներկայացված գրությամբ խնդրարկվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ Իրավաբանական վարչության պետի 22.05.2017թ. թիվ 649/01 որոշման դեմ Հանձնաժողովին ներկայացված դիմում-բողոքը թողնել անհետևանք:

Վերոգրյալի կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի համաձայն՝ դիմումով հարուցված վարչական վարույթը կարճվում է, եթե դիմողը գրավոր ձևով հրաժարվում է իր դիմումից:

Ելնելով վերոգրյալից, ինչպես նաև ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Մասնաճյուղի ներկայացուցչի դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝**

«ԿՈՐՍԱՆ-ԿՈՐՎԻԱՄ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻՈՆ» ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ներկայացուցչի դիմում-բողոքի հիման վրա հարուցված վարչական վարույթը կարճել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել տեսչական մարմինների միասնական բողոքարկման հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**